Մե՛ղք: Շա՛տ ցաւալի է: Մեծ առիթ մըն էր, որ ասով մարդկութիւնը կորսնցուց:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, կը հաւատանք, որ Բարին պիտի յաղթէ Չարին: Ինքնագիտակից մարդկութիւնը, վեհ և ազնիւ նպատակներով և բարոյական զգացումներով տոգորուած, հաւաքականութիւններու զոհաբեր աշխատանքով և պայքարով, ի վերջոյ պիտի իրականացնէ տիեզերական խաղաղութեան կերտումը, որպէսզի բոլոր ազգերու և ժողովուրդներու գոյատեւելու իրաւունքը հաւասարապէս, արդարօրէն ու միանգամընդմիջտ ճանչցուի և դառնայ իրականութիւն:

Բայց եթէ Չարը անպայման զոհ ուզէ, ապնուասիրտ մարդկութիւնը այդ գինն ալ պիտի վճարէ: Յանուն համամարդկային երջանկութեան յաղթանակին:

Երանի՛ և պատի՛ւ ապագայի բոլոր ազգերուն [անխտիր] իմաստուն և կորովի այն մարդկանց որոնք, միահայեացք սեւեռումով և կապմակերպուածութեամբ պիտի

*ԿԱՐԵՆԱՆ,*

*ԱՌԱՆՅ ԱՇԽԱՐՀԸ ԱՐԵԱՆ ԾՈՎԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ,*

*ԱՅՍ ՀՐԱՇԱԿԵՐՏ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ ՓՐԿԵԼ*

*ՉԱՐԻՆ ԺԱՆԻՔՆԵՐԷՆ:*

**ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ... (Շար. էջ 2-էն)**

Ենթարկուած «ճերմակ ցեղը»:

Ո՞վ արգելք պիտի ըլլայ սիոնիստներուն որ, մղուած ճերմակ ցեղին հանդէպ իրենց սնուցած ատելութենէն ու ոխէն, սադայելական միջոցներով ու բացէն աշխատանքներ չտանին, զայն երկրի երեսէն անհետացնելու համար:

Երեք հազար տարուան յունական քաղաքակրթութեան շարունակութիւնը եղող այս օրուան Եւրոպական քաղաքակրթութիւնը, բոլորովին ճերմակ ցեղին ստեղծագործութիւնն է:

Եւ ո՞վ արգելք պիտի ըլլայ սիոնիստներուն, որ ճերմակ ցեղին դէմ «ցեղասպանութիւն» չգործեն:

Ո՛չ մէկը:

Ո՞վ արգելք եղաւ 1915-ին Սիոնիստներուն՝ Հայ Ազգին դէմ ասոնց և իրենց կաթնեղբայր թուրքին կատարած ցեղասպանութեան:

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

**ԾԱՂԿԱԶԱՐԴԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ**

**ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ԹԱՓՕՐ**

Կիրակի, 24 Մարտ 2013, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ՝

*Պիտի պատարագէ եւ քարոզէ՝*

**ԳԵՐՇ. Տ. ՆՈՐԱՅՐ Ս. ԵՊՍ. ԱՇԸԳԵԱՆ**

- Սկիզբ ժամերգութեան ժամը 8:30-ին:
- Սկիզբ Ս. Պատարագի ժամը 10:30-ին:
- Մանուկներու Թափօր ժամը 11:00-ին:

Ծաղկազարդի տօնին առիթով, մայրավանքի շրջափակին մէջ հաւաքուած հայ մանուկներուն ու պատանիներուն իր հայրական խօսքը պիտի ուղղէ և ապա վեհարանին մէջ զիրենք պիտի ընդունի՝

**ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

**ԴՌՆԲԱՑԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4:00-ին տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամերգութիւն և ԴՌՆԲԱՑԷՔԻ արարողութիւն, նախագահութեամբ վեհափառ հայրապետին:

*Պիտի քարոզէ՝*

**ԳԵՐՇ. Տ. ՆՈՐԱՅՐ Ս. ԵՊՍ. ԱՇԸԳԵԱՆ**

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդ ներկայ գտնուելու առաւօտեան մատուցուելիք Սուրբ և Անմահ պատարագին և յետ միջօրէի ԴՌՆԲԱՑԷՔԻ արարողութեան, լեցուելու համար Քրիստոսի գալստեան խորհուրդով:

**ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ**

«ԵՐՋԱՆԻԿ Է Ա՛ՅՆ, ՈՐ ԹՈՒՐՔ ԵՄ Կ՛ԸՍԷ»

ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ  
(ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ)

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՂԲԱՅՐԸ  
ԸԼԼԱԼՈՒ ՅԱՆՑԱՆՔԸ

Մաքրիգիւղի մեր բնակարանին մէջ, մեզի հետ կ'ապրէր մեր հօր մայրն ալ:  
[Ռուբէն Սեւակին ալ մայրը եղող Արմաւենի Չիլինկիրեանը]:

1934-ին հայրս, մեր մեծ մօր Յունաստան՝ Սելանիկի շուրջ բնակող իր աղջկան այցելութեան երթալու փափաքին ընթացք տալով, Յունաստան գացած էր:

Մեր հայրը ամիս մը Սելանիկ մնալէ ետք, մայրը իր աղջկան քով ձգելով, Պոլիս վերադարձաւ:

Հօրս Յունաստանէն վերադառնալէն քանի մը օր յետոյ, մեր տունը ոստիկան մը եկաւ և մեր հօր հետ տեսնուիլ ուզեց:

Մեր պատանութեան տարիներուն, Պոլսոյ հայ ընտանիքի մը համար, Թուրք ոստիկանի անունը դահիճի հաւասար իմաստ մը ունէր:

Ոստիկանը հօրս հետ, սենեակ մը քաշուեցան, և մենք ալ, մեր մօրը հետ, ուրիշ սենեակի մը մէջ, անձկութեամբ սպասեցինք:

Ոստիկանին հօրս հետ մեկուսի գրոյցը ժամեր տեւեց, որ տարիներ թուեցաւ մեզի:

Ոստիկանին մեկնելէն ետք, հայրս շատ ընկճուած վիճակ մը ունէր: Բայց մեզի բացատրութիւն չտուաւ:

Եւ այս նոյն ոստիկանը, հետեւեալ օրերուն, միշտ որոշեալ ժամերուն մեր տունը եկաւ և կրկին, հօրս հետ սենեակ մը քաշուելով, ժամերով տեսակցեցաւ անոր հետ:

Եւ այս ոստիկանին այցելութիւնները գրեթէ ամիս մը տեւեցին:

Եւ ո՛չ հայրս եւ ո՛չ ալ մայրս, ոստիկանին մեր բնակարանը այցելութիւններուն շարժառիթին մասին, դոյզն տեղեկութիւն մը տուին մեզի:

Միայն տարիներ յետոյ, երբ արդէն խելահասութեան տարիքը թեւակոխած էինք, հայրս բացատրեց իսկութիւնը:

Մեր հօր ոստիկանութեան կողմէ հարցաքննուելուն պատճառով... Ըլլալով Ռուբէն Սեւակի եղբայրը՝ ինչո՞ւ Սելանիկ գացեր է, հոն ի՞նչ ընելու համար, որո՞նց հետ տեսնուած է:

Ոստիկանութիւնը պահանջած է մեր հօրմէն, որ իր Սելանիկ գտնուած մէկ ամսուան ընթացքին հոն, ամէն օր և ամէն ժամ ինչ ըրած ըլլալուն մասին, մանրամասն հաշիւ տայ: Եւ մանաւանդ՝ ուզած է որ հայրս ըսէ, թէ որո՞նց հետ տեսնուած է, և թուէ անձերը իրենց անուններով ու հասցէներով՝ որոնք արձանագրուած են, և դեռ՝ այն մասին, թէ նշուած անձերուն հետ ի՞նչ խօսած են: Ոստիկանը նօթագրած է ամէն բան, մինչեւ յետին մանրամասնութիւնները, «գող, սիրտը դող»ի վիճակով:

Ծայրայեղ զգոյշ էր Թուրք ոստիկանութիւնը: Ան միշտ կը կասկածէր, կը վախնար, թէ հայերը «վրիժառութեան» կրնային դիմել թուրքերուն դէմ:

Մինչդեռ Պոլսոյ հայերը ո՛չ միայն վրիժառութեան մասին չէին կրնար խորհիլ, այլ, նոյնիսկ, իրենց «հայ» ըլլալուն մասին մտածելո՛ւ իսկ կը վախնային: Այնքա՛ն որ նսեմացած հոգեվիճակ մ'ունէին:

Մեր ընտանիքը, մինչեւ մեր խելահասութեան տարիքը, մեզի Ռուբէն Սեւակի մասին չխօսեցան:

Մենք՝ ո՛չ Ռուբէն Սեւակէն, ո՛չ 24 Ապրիլ 1915 էն և ո՛չ ալ հայկական պատմութենէն լուր ունէինք:

Եւ մենք՝ թուրքերուն համար, թարմ ու կոյս «ուղեղ»ներ էինք: Անոնք կրնային մեզ շաղել և խմորել իրենց ուզած ձեւով, կատարեալ թուրքի մը վերածել:

Շատ լաւ կը յիշենք այն օրը, երբ Մուսթաֆա Զեմալ Աթաթիւրք ըսուած դահիճը մահացաւ:

\*\*

### ՀԱՅՈՒՆ ՆԿԱՐԱԳՐԻՆ ՄԷԿ ԺԽՏԱԿԱՆ ԳԻԾԸ

Գանք ձեր այն հարցումին, թէ՛ «1920-էն յետոյ, Սովետական շրջանին Հայաստանի մէջ, Հայկական ցեղասպանութեան և Հայկական վրիժառութեան մասին ժողովուրդին կեցուածքը ինչ եղած է»:

Այս հարցումին իբր պատասխան, ամենայն անկեղծութեամբ և առանց բառերը ծամծմելու ձեզի ըսենք, որ 1920-էն յետոյ Սովետական Հայաստանի ժողովուրդին, հայկական ցեղասպանութեան և հայկական վրիժառութեան մասին ունեցած կեցուածքը, ընդհանրապէս և դժբախտաբար, ճիշդ Պոլսոյ հայերուն ունեցածին պէս՝ վախի, անգիտակցութեան և անտարբերութեան կեցուածք մը եղած է:

Բայց, ուրիշ ի՞նչ կ'ուզէիք որ ըլլար:

Բոլորս ալ գիտենք, թէ Ս. Միութեան մէջ, մեծագոյն և մահացու յանցանքը՝ «Nationalisme»-ն էր, Ազգայնապաշտութիւնն էր (ոչ թէ ազգայնութիւնը):

Սովետական մայր սկզբունքը՝ տեղւոյն ժողովուրդներու միջեւ հաւասարութեան և եղբայրութեան վրայ հիմնուած քաղաքականութիւն մը եղած է:

Միութեան մէջ գտնուող զանազան ժողովուրդներուն միատեղ և խաղաղութեամբ կարենալ ապրելուն միակ միջոցը, անոնց ազգայնական ծայրայեղութեան երթալուն արգելք ըլլալն էր:

Եւ ասոր ալ միակ կերպը, ի պահանջել հարկին անշուշտ, մինչեւ «Terreur»-ի դիմող վարչաձեւով մը, բոլոր ազգայնամոլական հակումները ծանրօրէն պատժելն էր:

Այս էր Սովետ. Միութեան գոյատեւման միակ միջոցը:

Այս ձեւով Միութիւնը կրցաւ գոյատեւել 70 տարիներ շարունակ, առանց ներքին ապստամբութիւններու, առանց որ ազգամիջեան բաղխում-պատերազմներ տեղի ունենան Սովետ ժողովուրդներուն միջեւ:

Եւ Սովետական Միութիւնը՝ իր իշխանութեան տակ գտնուող տարբեր ու բազմաթիւ ազգերու համակեցութիւնը կ'ապահովէր իր միահեծան վարչաձեւին շնորհիւ:

Եւ այս վարչաձեւը՝ Սովետական ժողովուրդներուն միջեւ ներքին և արտաքին բնոյթի իրարամերժ խնդիրներու արծարծումին արգելք եղած և հեղինակներուն դէմ ալ շատ ծանր պատիժներ սահմանած էր:

Ազգայնականութեան դէմ սահմանուած պատիժները այն աստիճան խիստ էին, որ ժողովուրդին մէջ տարածուած երգիծական համոզում մը կար՝ «անձ մը, գիշերը երազին մէջ գործած յանցանքին համար ալ, կրնար դատապարտուիլ»:

Եւ այս ինքնակեդրոն վարչաձեւին ազդեցութիւնը ժողովուրդներու վրայ այն եղաւ, որ Սովետական շրջանին ծնած առաջին սերունդները, իրենց պատկանած հաւաքականութեան ազգային պատմութեան և կրօնական ավանդութիւններուն մասին հիմնական տեղեկութիւն մը չունեցան:

Միութենէն ներս դպրոցական դաստիարակութիւնը, բոլոր ժողովուրդներուն համար ալ, գրեթէ միեւնոյնն էր: Ան հիմնուած էր հոգիով և մարմնով «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԶԱՂԱԶԱՅԻ-Ի ՆՈՐ ՏԻՊԱՐ ՄԸ» ստեղծելու հեռանկարին վրայ:

Ս. Միութեան բոլոր հանրապետութիւններուն մէջ եղածին նման, Հայաստանի նոր սերունդներն ալ, ո՛չ հայկական պատմութենէն, ո՛չ ազգային և կրօնական ավանդութիւններէն և ոչ ալ 1915-ին թուրքերուն կատարած ցեղասպանութենէն համապարփակ տեղեկութիւն մը ունէին:

Ոչ միայն Սովետական Հայաստանի նոր սերունդը տեղեակ չէր 24 Ապրիլ 1915-ին մանրամասնութիւններէն, այլեւ ամենաբարձր դիրքերու վրայ գտնուող մշակոյթի ղեկավարներն անգամ չէին գիտեր 24 Ապրիլ 1915-ին հայ մտաւորականներուն ենթարկուած ճակատագրին մասին:

Այստեղ կ'ուզենք նշել, Սովետական Հայաստանի Ազգ. Ակադեմիայի ծանօթ անդամ Ռուբէն Զարեանին վկայութիւնը:

Գիտէք, թէ Ռուբէն Զարեանը, մեզի համար, տխրահռչակ այն ակադեմիկոսն է, որ նահատակ Ռուբէն Սեւակին անունը սրբապղծած է «Սեւակ» անունը նոր բանաստեղծի մը տալով: Իր անունը չփոխելուն համար թուրքերուն կողմէ նահատակուող Ռուբէն Սեւակին այս անգամ ալ հայերուն կողմէ, ամէն օր ու ժամ հոգեպէս սպաննուելուն պատճառ եղած է:

1982-ին մենք, նամակով մը, դիմեցինք այս Ռուբէն Զարեանին և իրեն հարցուցինք, թէ ինչո՞ւ և ի՞նչ պատճառաւ, Ռուբէն Սեւակին անունը անիրաւաբար տուած է ուրիշ բանաստեղծի մը:

Ռուբէն Զարեանին մեզի տուած պատասխան-նամակը, Սովետական շրջանը ապրած ամբողջ սերունդի մը 24 Ապրիլ 1915-ի հանդէպ ունեցած անգիտակցութիւնը և անտարբերութիւնը կը ցոլացնէ:

Ահա՛ այդ նամակը՝

*«Մի փոքր ուշացումով պատասխանում եմ ձեր նամակին:*

*Պարոյրի ազգանունը, ինչպէս գիտէք, Ղազարեան է: Երբ նա ներկայացաւ ինձ, ես «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ամսագրի խմբագիրն էի: Մեծ տպաւորութիւն թողին նրա բանաստեղծութիւնները. որոշեցի հրապարակել, ասպարէզ տալով մի շնորհալի երիտասարդի, հաւատացած, որ լաւ ապագայ է սպասում իրեն: Ղազարեանը խիստ տարածուած ազգանուն համարելով, մտածում էի գրական մի յարմար անուն գտնել նրա համար:*

Այդ օրերին Ալետիք Իսահակեանը իր գրոյցներից մէկի ժամանակ արեց Ռուբէն Սեւակի ողբերգական պատմութիւնը:

Ես այդ ամբողջ գիշեր նրա պատմածի տպաւորութեան տակ էի: Կիսատ մնացած կեանք: Եւ մտածեցի, թէ լաւ կը լինի, իբր Պարոյրին կոչեմ Սեւակ, որպէսզի ողբերգականօրէն կեանքից հեռացած մի Սեւակին շարունակի մի ուրիշ Սեւակ:

Այս է ամբողջ պատմութիւնը:

11 Փետրուարի 1982, Երեւան, Ռուբէն Ջարեան»:

Ինչպէս կը տեսնէք, այս նամակը կ'ապացուցանէ, թէ «Սովետական Գրականութիւն»-ի պէս ամբողջ Հայաստանի գրականութեան հայելին եղող թերթի մը խմբագիր Ռուբէն Ջարեանն անգամ տեղեակ չէր 24 Ապրիլ 1915-ի նահատակներու եղերական պատմութեան:

Այս պայմաններուն մէջ, հայ ժողովուրդը մասամբ հեռացաւ իր ազգային ինքնութենէն, մոռցաւ իր կրօնական և ազգային անհատականութիւնները, նոյնիսկ միւս հանրապետութիւններու ժողովուրդներէն ալ քայլ մը աւելի առաջ գնաց, Սովետական քաղաքացիներու օրինակելի զանգուածի մը վերածուեցաւ:

Շատ բնական է, որ հայ ժողովուրդին ազգային գիտակցութեան ընդարմացումը, «Սովետական քաղաքացիի տիպար»-ի վերածուելուն պատճառը, վարչաձեւին այդ շրջանի խստութիւնը եղած էր:

Բայց մենք կը հաւատանք, որ հայ Ազգին դիրաբեկ նկարագիրն ալ, այս հարցին մէջ, մեծ դեր խաղացած է:

Հայ ազգին լաւագոյն յատկանիշները, դարերու ընթացքին, Բիւզանդական, Պարսկական և Թրքական իշխանութիւններուն ազդեցութեան հետեւանքով մասնաւորապէս, կամաց կամաց փոխուեցան, և ստրուկներու յատուկ, շատ դիրաւ համակերպող նկարագիր մը, հայ ազգին մեծամասնութեան մէջ բոյն դրաւ ու աւելի շեշտուեցաւ:

Հայ ժողովուրդը միւս բոլոր Սովետական ժողովուրդներէն աւելի, Սովետական վարչաձեւին պայմաններուն համակերպեցաւ:

Գիտցողները կրնան վկայել՝ որ հայ ժողովուրդէ ներս ուսերէնի գործածութիւնը աւելի մեծ համեմատութիւն ստացաւ, բախտատած միւս ժողովուրդներուն, և նահանջեցին իր կրօնական և ազգային անհատականութիւնները:

Հայուն ազգային միութեան և տեւականութեան աղբիւրը եղող Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին որբացաւ, և միայն Սուրբ Էջմիածնի մէջ իր գոյատեւումը շարունակեց:

Եկեղեցի երթալը, իբր Սովետական քաղաքացի՝ ամօթ, նուաստացուցիչ և վտանգաւոր կը նկատուէր:

Հայկական եկեղեցին, այն աստիճան արհամարհուած էր, որ նոյնիսկ, Երեւանի մէջ գտնուող հնադարեան հայկական ճարտարապետութեան կոթողները եղող եկեղեցիները փլցուեցան, ճամբայ բանալու պատրուակով:

Բայց, շեշտենք, որ ասիկա Ռուսերուն ստիպումով չեղաւ: Հայոց որոշումով եղաւ, անոնց դիրահաւան նկարագրով: Միութեան առաջին տասնամեակներուն էր այս:

ՀԱՅՐԵՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ  
ԳՈՎԵԼԻ ՄԷԿ ՅԱՅՏԱԳԻՐԸ...

«Մ Ե Ր Ո Ն Ք» ...

Հայրենի «Հ-1» հեռատեսիլին գնահատելի մեկ նախաձեռնությունը կը կազմէ «Ծագումով Հայեր» կամ «Մերոնք» հաղորդաշարին շարքական հերթականությամբ սփռումը («քողարկում»), որ կը շարունակուի տարիէ մ'ի վեր: Հետաքրքրաշարժ այս յայտագիրով թէ՛ Մայր Հայրենիքի ու «Ներքին Սփիւռք»ի և թէ՛ Արտերկրի Հայության կը ծանօթացուին ժամանակակից հայեր, այլազան ասպարէզներու ծառայող ու դիրք-համբաւի տէր դարձած որոնք, իրենց նկատելի յաջողութիւններով կը պատուեն հնագոյն մեր ժողովուրդը իր պատմական հայրենիքով, որուն մեծ մասը ցայսօր կը մնայ բռնագրաւեալ, ազատութեան կարօտ ու արդարատենչ:

Վերջերս պատեհութիւնն ու հանոյքը ունեցանք դիտելու հաղորդում մը, որ հեռուստադիտողին ծանօթացուց ժընեւաբնակ [Զուիցերիա] ազգային ներկայացուցչական դէմքերէն Յակոբ Աւագեանը որ մեր վաղեմի ու սերտ բարեկամներու շարքին կը դասուի: Իր յայտնուիլը հայրենի «Հեռուստաէկրան»ի պաստառի վրայ, հանելի անակնկալ կազմեց:

Յակոբ Աւագեանի և իր եղբայրներուն հետ մեր ծանօթութիւնը տասնամեակներու վաղեմութիւն ունի և սկսած է այն օրէն, երբ ինք ու իր եղբայրները կ'ապրէին Լիբանան [Պէյրուք] և մաս կը կազմէին մեր միութենական առաջաւոր մարզիկներու փաղանգին: Արժանացան պարգեւներու տարրեր մրցումներու ընթացքին: Այնուհետեւ ընտանեօք հաստատուեցան Լոնտոն ու ժընեւ: Այս վերջին քաղաքի մէջ կը գտնուի, տասնամեակներէ ի վեր, իրենց գորգի «Արեւ» վանառատունը:

Յակոբ փեսան է Յովհաննէս Զիլինկիրեանի, Ան հնագոյն գորգերու գնահատման հմուտ մասնագէտ է: Ծանօթ է երկրին քաղաքական լայն շրջանակներուն: Կ'անդամակցի Զուիցերիոյ Քրիստոնեայ-Դեմոկրատ կուսակցութիւնին որուն փոխ-նախագահութիւնը կը վարէ տարիներէ ի վեր: Ինչ որ քիչ պատիւ չէ հայու մը համար, որ կը գործէ իր ապրած երկրին այլազգի, «օտար» նկատուող մեկ շրջանակի մէջ:

Հայ-Զուիցերիական ժողովուրդներու բարեկամութիւնը շատ տասնամեակներու վրայ կ'երկարի: Կարելի է ըսել՝ գրեթէ դարաւոր: Մեր ողբերգակ ժողովուրդի յիշողութեան մէջ յաւերժ անմոռաց կը մնայ Զուիցերիոյ բնիկ ժողովուրդին մատուցած մարդասիրական օգնութիւնը բազմաչարչար հայուր-



Աջին՝ Յակոբ Աւագեան հայրենի պատմաբան Վլատիմիր Պետրոսեանի հետ ժընեւի մէջ



ՀԱՅՐԵՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ  
ԳՈՎԵԼԻ ՄԷԿ ՅԱՅՏԱԳԻՐԸ...

«Մ Ե Ր Ո Ն Ք» ...

եան: Մեծ Եղեռնի տարիներուն և վաղորդային՝ մանաւանդ: Եղած ենք ու կը մնան շնորհապարտ այս վեհանձն ժողովուրդին, իր մարդասիրական կազմակերպութիւններուն որոնք անգնահատելի ծառայութիւն մատուցին ցեղասպանութեան զոհ Ազգիս աստանդական բեկորներուն, խնամելով դեռահասակ որբեր, տալով ապաստան որբուայրիներուն, իսկ ամենակարեւորը՝ միջազգային հանրութեան զայրոյթը կեդրոնացուցին ջարդարար և բռնագրաւիչ Թուրքին վրայ, նաեւ՝ կարեկցանք Եղեռն ապրած ու ցանուցիր դարձուած մեր ժողովուրդի բեկորներուն որոնք կը մնան ընդմիշտ շնորհապարտ: Մասնաւորաբար՝ Փափա Քիւնցլեր-ին ու Ճաֆուր-ին, որոնք եղած են հայութեան սերտ բարեկամներ: Մինչեւ անգամ անոնք օգնած են Լիբանանի [Ազունիէ] Ազգային բուժարանին կառուցման և յանձանձումին: Պէտք է մոռնալ նաեւ հայասէր ու որբախնամ օտարազգի շատ բարերարուհիները, ձիպէյլի որբանոցին կամ մանկատան օժանդակած երկար տարիներ:

Հայրենի հեռատեսիլի [Հ-1] ներկայացուցիչին հետ եղած հանդիպման ընթացքին, Յ. Աւագեան հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցեց ինչ մը ամէն բանի մասին...:

Գորգագործութիւնը եղած է Աւագեան գերդաստանին մասնագիտութիւնը:

Յակոբին Հայրը և նախնիները եղած են հմուտ այս մարզի մէջ: Սկսած Այնթապէն ուր ունէին գորգագործութեան արհեստանոց: Հայրը՝ Տիգրան եղած է անուանի գորգահիւսութեան ու առեստուրի մէջ: Աւագեաններու 4-րդ սերունդի ներկայացուցիչն է ինք: Մնած է Լիբանան:

Նշենք այստեղ որքան հետաքրքրական՝ նոյնքան ու աւելի յուզիչ մանրամասնութիւն մը: Եղելութիւնը կրնայ դառնալ օրինակելի մերօրեայ շատ հայերու համար, որոնք իրենց ազգային ինքնութիւնը օտար շրջանակի մէջ բացայայտելու կը վարանին: Տեսակ մը բարոյոյթ կը զբառնէ: Երբ հայ կոչուիլը հպարտութիւն պիտի ներշնչէր իրենց:

Յակոբ յայտնեց որ մայրը արարուհի է եղած: Սակայն դառնալով հայախօս ու ջերմ հայասէր, ստիպած է զաւակներուն որ յանախեն հայկական դպրոց և նախ ու լաւապէս սորվին մայրենի լեզուն: «Նախ հայերէն պիտի սորվիք ու խօսիք»- պատուիրած է իրեն ու եղբայրներուն [որոնք ներկայիս կ'ապրին Լոնտոն], աւելցնելով.- Ձեր ազգային արմատներուն չէք կրնար մեղանչել...»:

Յակոբին ազգային-հայրենասիրական դաստիարակութեան վրայ ազդու եւ բարերար ներգործութիւն ունեցած է մեծանուն հայ և հայրենասէր Յովհաննէս Զիլինկիրեանը, որ իր աներն է և նոյն ատեն ազգային-բարեսիրական գծով տարած գործունէութեան նեցուկը:

Անուանի բարերար-գրող Յովհաննէս Զիլինկիրեանի ազգային-բարեսիրական զգացումներու կրողն է նաեւ իր երկրորդ փեսան՝ Վարդան Սրմախէշեանը, որուն հայրենասիրական գործունէութեան

ՀԱՅՐԵՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ  
ԳՈՎԵԼԻ ՄԷԿ ՅԱՅՏԱԳԻՐԸ...

«Մ Ե Ր Ո Ն Ք» ...

» ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ  
ՅԱՅՏԱԳԻՐԸ...

Ո Ն Ք » ...

բարեկամեցողութեան շօշափելի մէկ ապացոյցը իրենց ժընելի ժամացոյցի գործարանի մէկ մասնաճիւղին բացումըն է Արցախի մէջ, մօտ անցեալին: Պատմականօրէն հայկ., այժմ Ազատագրուած հողի վրայ բերել արդիւնաբերութիւն գարգացնելու հայրենասիրական գովելի նպատակով:

Այս մէկը եղած է Երեւանի Արովան փողոցի վրայ գտնուող վանառփի ու նորոգութեան շինող խանութի բացումէն ետք, որ արդէն երկու տասնամեակի մը վաղեմութիւնն ունի և գայն անձամբ այցելելու և գնահատելու պատեհութիւնը ունեցած ենք մօտ անցեալին:

Աւելցնեմ նաեւ, որ Լիբանանի շուրջ քսանամեայ քաղաքացիական աւերիչ կռիւներու ընթացքին, Պէյրութի Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէնին [ոմրակոծումներու հետեւանով գրեթէ կիսակործան եղած] ի նպաստ հանգանակութիւն կատարելու առաջնութեամբ երբ ժընել ալ այցելեցի, Վարդան երկոտասնեակ մը սաներու ուսումնառութեան բոշակները անձամբ ապահովելու յանձնառու եղաւ: Իր խոստումը յարգեց շատ տարիներ շարունակ: Երկրի տագնապի ամբողջ տեւողութեան [Յոյսով եմ, որ Գոլէնին տնօրէնութիւնն և կրթանպաստ ստացած սան-սանուհիները չեն մոռցած իրենց բարերաին]:

Վարդան որդին է «Նայիրի»ին հարազատ, բերրին հրատարակութեան դեռ առաջին օրերէն զօրակցած ու աշխատակցող Նազարէթ Սրմախչին, որ Զուիցերիոյ մեր համայնքի ներկայացուցչական-դեկավար դէմքերէն է, ազգային-եկեղեցական մարզէ ներս մանաւանդ: Հաւատաւոր էջմիածնական մը: Միշտ հաւատարիմ կարգ-կանոնի ու աւարտութիւններու պահպանման: Կորովի եւ ուղղափառ հայրենասէր մը՝ որուն ողջախոհ ու գործնական հայրենասէրի գրութիւնները ուշադրութեամբ կ'ընթերցուին «Նայիրի»ի ընթերցողներուն կողմէ և կ'արժանանան բարձր գնահատանքի: Նմոյշ կարելի է նկատել ներկայ թիւով լոյս ընծայուածը [կարդալ քիչ անդին]: Վերագրեալ տողերը բուրբի կը յանձնուին ընթերցողներուն ծանօթացնելու միտումով արտերկրի մեր բարեգործ հայրենակիցները-ինչպէս սովորաբար կ'ընէ հայրենի «Հ-1» հեռատեսիլը- որոնք ըլլալով համեստութեան տիպարներ, վստահաբար պիտի դժգոհին դրուատումի տպաւորութիւն ձգող մեր ներկայ գնահատական տողերէն, որոնք բնաւ շոյալութիւն չեն սակայն, այլ՝ պարզ իրականութեան մը նշում:



Վարդան Սրմախչ

ՀԱՅՐԵՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ  
ԳՈՎԵԼԻ ՄԷԿ ՅԱՅՏԱԳԻՐԸ...

«Մ Ե Ր Ո Ն Ք» ...

Վարդան ու իր նմանները բող ներող ըլլան գիրենք «անհանգստացնող» իմ  
բացայայտումներուն համար: Մտէն ծանօթ եմ իրենց համեստութեան:

Բայց զարմանալի չէ՞ որ մենք՝ հայերս, ըլլալով սփռուած երկրագունտի  
չորս ծագերուն, դեռ լաւապէս չենք նանչնար իրար, աղօտ պատկերացում չու-



Զախէն աջ՝ Յովհաննէս Զիլինկիրեան և Նազարէք Սրմաէշ

ցինք իրարու  
ինքնութեան ու  
հանրօգուտ ծա-  
ռայութիւննե-  
րուն մասին...  
Այս գծով օգ-  
տակար գործ կը  
կատարէ հայ-  
րենի «Հ-1»  
հեռատեսիլը իր  
«Մերոնք» հա-  
ղորդաշարով:

Զմոռնանք  
նշելու նաեւ  
լինչպէս հաղոր-  
դեց հայրենի  
«Հ-1» հեռա-  
տեսիլը, որ  
Զուլիցերական  
այն պատուի-  
րակութիւն մը

նորերս այցելեց Հայաստան ու Արցախ, գլխաւորուած է երկրկի Քրիստոնեայ  
դեմոկրատ կուսակցութեան փոխ նախագահ Կի Մետանի կողմէ, որ Ստեփա-  
նակերտի [Արցախ» մէջ ունեցած է երկարատեւ շահեկան գրոյց Նախ. Բակօ  
Սահակեանի և ուրիշ պատասխանատուներու հետ: Որոշ թիւով զուլիցերիացի-  
ներու հայասիրութիւնը բնածին է երեւի: Աստուած աւելին ընէ...:

Տեղն է ընդգծելու նաեւ, որ մեր զուլիցերահայ ազգակիցները նպաստած են  
հայ և բնիկ Զուլիցերիացի ժողովուրդներու միջեւ բարեկամական կապերու  
հաստատման ու զարգացումին:

Մտն անցեալին երկրի Քրիստոնեայ-Դեմոկրատ կուսակցութիւն-ի փոխ  
Ատենապետ Կի Մետանի գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը Արցախ և  
Հայաստան այցելած է: Ստեփանակերտի մէջ տեսակցած է Բակօ Սահակեանի  
և ուրիշ պատասխանատուներու հետ, մտերմական մթնոլորտի մէջ որ յետագայ  
յարաբերութիւններու առաւել սերտացման պիտի նպաստէ: Վերջիշեմն նաեւ,  
որ Զուլիցերիա եղած է հայկ. ցեղասպանութիւնը նանչցած ու դատապարտող  
առաջին տէրութիւններէն, որոնք վճռապէս նեցուկ են Արցախի ժողովուրդի  
ազգային ինքնորոշման իրաւունքին և անոր գոյատեւմանը, ինքնուրոյն և  
գերիշխան պետութիւն որպէս:

ԺԻՐԱՅՐ Ն.

**«ՄԵՐ ԳԻՒՂԸ»՝ ԱՅՈ՛Ւ,  
ԲԱՅՑ ՀԻՄԱ՝ «ՄԵՐ ՀԱԼԷՊԸ»  
ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ**

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը, իր ծնունդէն ասդին անտարակոյս, որ օրհնաբեր դերակատարութիւն եւ օգտակարութիւն ունեցած է, Հայաստանի եւ Արցախի լեռնակուտակ կարիքները հոգալու կամ նպաստելու համար անոնց:

Բարեբախտութիւն է, որ թէ՛ Հայաստանի, թէ՛ ԱՊՀի մէջ, կան բազմաթիւ մեծահարուստ ու գերհարուստ հայեր, որոնք նիւթական ու տնտեսական «կայսրութիւններ» ստեղծած են: Ոմանք, միջազգային ոլորտներու մէջ, նոյնիսկ կը գրաւեն բարձրագոյն դիրքեր՝ ըստ յայտարարուած ու հրապարակագրուած վիճակագրութիւններու:

Այդ «դասակարգ»ին պատկանողներուն քանի՞ տոկոսը կ'օժանդակէ իր հայրենիքին ու ժողովուրդին՝ կ'անգիտանանք: Բայց, որոշապէս կան *երախտաւորներ*, որոնք պատրաստակամ են հանդէս գալու մեծ կամ փոքր նուիրատուութիւններով, մեկեկնասութիւններով կամ ձեռներէցութիւններով:

Այդուհանդերձ, բաւարար են ատոնք, հայրենական եւ արցախեան աշխարհին աւելի բարեկեցիկ կեանք մը կարենալ ապահովելու տեսակէտէն: Անշուշտ՝ ո՛չ. որովհետեւ օգնութեան կարօտ դաշտերն եւ մարզերը բազմաթիւ են:

Գաղտնիք չեն այդ մարզերը, գաւառներն, գիւղերը: Նոյնիսկ որոշ քաղաքներ կը գտնուին անմիջապէս եւ աննեցուկ վիճակներու մէջ, ուր պետական հովանաւորութիւնը կամ հոգատարութիւնը բացակայ է:

Սփիւռքէն դիտելով այդ անբաղձալի վիճակը, ոմանք բարեմտօրէն, ուրիշներ՝ անտեղեակ ըլլալով, մաս մըն ալ՝ պատեհապաշտօրէն կը խանդավառուին (երբեմն ալ՝ հաշուենկատօրէն կ'ուզեն խանդավառել ուրիշները) ըսելով՝ թէ ամէն ինչ լաւ ու «նորմալ» է, նկատի ունենալով մայրաքաղաք Երեւանի մէջ սփռուած պէսպիսուն պանդոկները, շքեղ ճաշարանները, գրաւիչ ժամանցավայրերը եւ ընդհանրապէս՝ «զգլխիչ» տեսավայրերն ու «փարթամ» կեանքի տարրեր երեսները:

Այդպիսիներ կը մոռնան (կամ կ'ուզեն մոռնալ ու մոռցնել), որ ստուարաթիւ զանգուած մը կայ զուրկ է այդ «բարիք»ներէն օգտուելու կարելիութիւններէն, իսկ աւելի քան սահմակեցուցիչ վիճակ մը կ'ապրին արտամայրաքաղաքային շրջանները:

Այս բոլորէն՝ *արտագաղթ* եւ *արտահոսք*, *հայրենաթափութիւն* ու *հայաթափութիւն*, անզուսպ ու անսանձ թափով, մինչ իշխանութեան կողմէ՝ ո՛չ մէկ գործնական դարմանում, ո՛չ մէկ յուսադրիչ բարելաւում, ո՛չ մէկ իրագործելի նախաձեռնութիւն, բացի... կարկտան ու կցկտուր կարգադրութիւններէ. մինչ սակաւապետներ [այսինքն՝ «մաֆիոզ»ական տեսակաւոր առանձնաշնորհեալներ] արիւնաքամ կ'ընեն ժողովուրդին մեծամասնութիւնը, իշխանաւորներու գիտակցութեամբ եւ, ինչո՞ւ ոչ՝ մեղսակցութեամբ:

Զարմանալի է, որ այս սրընթաց անկումին դիմաց, գործող իշխանականները կը շարունակեն իրենց ազգային-պետական «սխրագործութիւնները», ինքզինքնին աւելի պարարտացնելով, իսկ ժողովուրդը՝ աւելի բարոյալքելով եւ աղքատաց ընելով:

Ասիկա կը գոհացնե՞ հայրենի իշխանութիւնները, կը լիցֆաւորե՞ սփիւռֆահայութիւնը, որոնցմէ առաջինը կը շարունակէ իր «բռնութիւնները», իսկ երկրորդը՝ իր «քարօրութիւնները», հազիւ թէ՛ զիրար տեղ մը գտնելու կամ հասարակաց եզրեր ստեղծելու հաւանականութիւններով:

Ինչո՞ւ ըրինք վերոյիշեալ ընդգծումները, թէկուզ եւ արագ հպումներով, մանաւանդ որ, այս թղթածրարը, միշտ ալ եղած ու մնացած է լուսարձակի տակ, այնքան ատեն որ կը ներկայացնէ հայ ժողովուրդին սուր «վոյթած»ներէն բարձրագոյնը:

Ներկայիս «Հայաստան» հիմնադրամը հրապարակ նետուած է, նոր «թոն»ով մը, որ արդէն իսկ իր լրումին հասնելու վրայ է (կամ հասած է):

Ոչ ոք դէմ է «Հայաստան» հիմնադրամի առաքելութեան. բայց ատենը չէ՞ որ անիկա վերատեսութեան ենթարկուի, երբ Հայաստան եւ Արցախ այլեւս ի վիճակի են իրենց «իւղով տապկուելու», այնքան ատեն որ մէկ գործարար մը միայն, կրնայ ամբողջ գիւղի մը, նաեւ... քաղաքի մը շինարար-մատակարարը դառնալ, ալ ո՛ւր մնաց որեւէ հանրանպաստ ձեռնարկութիւն մը հոգատարելը:

Ճիշդ է, իւրաքանչիւր հայ իր լոււման բերելու է մեր հայրենական ծրագիրներուն, բայց, երբ «Հզօր Սփիւռֆ» կարծուածն ու յորջորջուածը ի՛նք սկսած է տկարանալ ու նահանջել (որուն ծանօթ պէտք է ըլլան բոլորը), «Հայաստան» հիմնադրամը, իր ժողովրդանուէր ու ժողովրդամատոյց սլաֆները պէտք չէ՞ ուղղէ դէպի Սփիւռֆ, փոխանակ անկէ նպաստ ակնկալելու:

Սփիւռֆի մէջ հայապահպանման գործօնները սկսած են երեքալ, իրենց ամենէն նուիրական չափանիշներէն (լեզու, ուսուցիչ, գործիչ, մամուլ, եւայլն), ո՛չ թէ համապատասխան մարդուծի բացակայութեան, այլ՝ գերազանցապէս տնտեսական պայմաններու վտիտութեան կամ չգոյութեան պատճառներով:

«Հայաստան» հիմնադրամի պատասխանատուներ, հոն՝ Հայաստանի, թէ հոս՝ Սփիւռֆի մէջ, պէտք է գիտնան, թէ Հայաստան եւ Արցախ մեր անփոխարինելի կողուաններն են... մեր գոյութեան եւ ազգային պահանջատիրութեան:

Այսօր, Սփիւռֆի ամենէն քարախուն ու թթիւմոր հայագաղութը՝ սուրիահայութիւնը, երբ կ'անցնի խիստ վտանգաւոր հանգրուանէ մը, «Հայաստան» հիմնադրամը չէ՞ր կրնար իր «ռատիօթոն»ը կամ «Հալէպաթոն»ը այս տարի ամբողջութեամբ յատկացնել սուրիահայութեան, փոխանակ «փոքր» տոկոս մը անոր յատկացնելով գոհանալու: Իսկ լիքանահայութեան ձեռներէցները (այսինքն՝ հարուստներուն հարուստները) իրենք հոգային իրենց գաղութին-համայնքին կարիքները, որոնց թուումը այդքան ալ դժուար պիտի չըլլար (բայց, այս մէկին հանգամանօրէն կ'անդրադառնանք մէկ ուրիշ առիթով...):

Ասիկա ի՞նչ կը պակսեցնէր հիմնադրամին հեղինակութենէն կամ այս մէկին առաքելութենէն, այնքան ատեն որ «Հզօր Սփիւռֆ»ին հսկայական մէկ բեկորը ինչքանով զինք կը շեղեցնէր իր վտանգուած ու կարօտ՝ առանց նիւթական համահայկական թիկունքի:

«Մեր գիւղը» կարգախօսը (ցաւօք ուշացած) հոյակա՛պ նախաձեռնութիւն մըն է, որուն պատասխանատուութիւնն ու պարտաւորութիւնը կ'իյնան պատկան կող-

-տրիտմ իսկանմի-լելոլ հժազք ւսմսվ ,նլվելսոդհոմսե մտտո ւս ւոյ իսկանմի ովոտվր վստա 09 ,վեզմտի մր ժոդոզի հվոդմեզ ւսեզոլվստա ոչսոեմի տզս ոչսսս ,ոհոլվրսլո ըվ վեուեոդոսսի ւո ոչ ,ոչսսեզս ոչսոչ նշվչ ,ճոսսս մր վստա ոչլոտրսվ ,սս վոդմ միոյվի մեջ ըոդոդոսս մի ւոլ

:ւոդոդոզոմ,ի մսսվեմ ոդոզելսոլմսսս մեջ ,ժսմիդոմ ւս

:մչ ճվժ մոդոդոլմսսսս իսսսսսս

նլոլ :իսսեզոլոմոմի մեզ ւս մվ մչ ժոսսոմ ւոյ մժվոդսոդմ մվ ոդոլվ

:ճչր ւսսեզոլսսսսս ւեզոմ ժվոդսոդմ ւոյ հ մոսսթ

:ւոմի ովսսն վոմոսսսս մչ ժոդոդոմի

մր ոչսս ւոյ ւ,ոմվ մս ,մր վսսսսսսսսս վժոդոզի ժչ ժոեուեոդոսսի ժսս

:մոդոսս ովոչսս նոմ

նսոճոթսվսոմ միոստոճվո վիոսզո ոչժսս-ս ոչսս վ ոչսսսսս մչ ոլմսս

ոդմսս ւչ :ոդոլվ մչ ոլմսս ո,ոմսս մսո նոմ ոդոզելսսլեոմ վոսսսս

:ոլի եզիսսս վոմ՝ ւսլո ւս ովսսսոոմո ոլժսսվր ւոմեզ մր ւոչեոդո ճնսս

-րո մսվե վսսսսսսսսս 6 ոդոսսսսս ՇԻՕՇ վեմեզեմեմժոճ «վսվոմ»

:ոլժեմե

-ոլմ վժոդոզի ճնս մվ ւոեզսսոմ ոհոնոմ ւս :մչսսոմ,ի իսսեզոսսե վոդոչս

-մո մս ,ոլլոտրսվ ,նոդոոդոր ւս ոլվսսսս մոլվելսոլմսսս մչ ժչո

:ժոդոդոսսսսսսսս

հոս ոլվսմիոդոմսսե նոմ վվիոլիսսսսսս ոչս ոլլոտրսվ ժոչր ,ոչսսս

,ոչսսսսսսսսսսսսսս վոսոմ վիոդոդոթ մեզ վեզնսսոճոսսս մոդոմե

-ոլմե վիոսզո ոչժսս-ս վոհն ,իսսեզոսսեոսսե մեվսո ,մեզ ւո ոլմր մո

:ոդոլվ ոլեոմի

-ոլմե մչոճոլմսս,ի ո,ոմսս ,նսսեոդոլմե միսժ ւոչժսսզլո ,մսմիոդոմ

-եթ հչր սվսոժչր վվիոլիսսսսսս ոհոդոսսսս մչ ժոսսս մր ժսվն ւսս

-եթոմսվս ճչր եոչսս մսեզոսսե վոդոչսս մ վեմոդոմ ոլոդոմեոդո

:մոդոմեոլմե նոմ վոհն ոչժոդոմսսսսսս ոլլոտրսվ մոդոսսն

մի վոսոմ մոլվելսոլմսսս նլոլ :մոդոսս ոլլոտրսվ ոդոզելսոսսոոսս

նոմ իսսիեջ մչ ոլմսս ոդմսս ,սվեչո ւս մոհի ոչսեոսս մեջ ,ոդոլվ

:ժոսսոսսոսսս

-ոդոսսոո ոլլոտրսվ ոչժսս-ս ,ոլլոմի սոժոլեոլ մեջ հոնսս մեջ ,նլոլ

:ոլվեզոսսոոդոմ ոլմիվ ճչր ոլլոսսսսսսսս ոդոզելսո

-նչոոոոդոմ ւոյ ,ոլլոտրսվ ոչժսս-ս մչ ոչոսս ւոմվ մս ,ճչր մոչսս մեջ

վոլվ հե ւչ ոլվեզոլմսս վ ճչր ոոսս մեզ ,հե մոլվելսոլմսսսս ոլլոտրսվ

ժոլեոլմի ւչ մսսս ոլլոտրսս մեջ վն ժոլե ճոսսսսսսսսսսսս

:ժչ ժոսսսսսսսսսս մր վոսոսսսսսսսս մոժ մս վեոե,ի մչ ոլլոտրս

-եղն վժոդոզի մեզ ոլլոտրսսս վո ւս հչս նոմ ,ոդոլվ մս իսկոտրս

Սիրելի Յոհաննես Շիրիզի

:ոլլոտրսվ ոլլոտրսսս մսսս ոլլոտրսսս մսսս ոլլոտրսսս

վեոեոմի իսոմ ճչր ոլվեզեմեմժոճ «վսվոմ» սոմիոմսս մեզ ,ժսս

-հն իսկոտրսս ոչժսս-ս «, ոչսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսսս

**ՆՎԿՓՎՍՑԿՆՎՆՑ ԳՆՑՆՉՎՍ**

հարիւր գիրքեր:

Վատահ եմ. ինչ որ էր Իրման Ձեզի համար, նոյնն էր Արմինէս ինծի համար:

Իրման ու Արմինէն երէկ խօսող, ժպտացող, մեր տուններուն լոյսերն էին: Այսօր լուսանկար են եւ յուշ:

Բայց անոնք մեզի հետ են, մեզի հետ կը մնան ընդմիշտ. վատահ եմ: Ձեմ սոռնար երբեք Իրմային ժպիտը որ բուրավէտ վարդի մը պէս կը բացուէր Ձեր տանը մէջ:

Այսօր ալ, երբ ինք չկայ, ի՞նչ կը շարունակէ լուսաւորել Ձեր տունը, կեանքը, այո՛, ընդմիշտ:

Վատահ եմ. այս մեծագոյն հարուածը երբեք պիտի չկարենայ ընկճել Ձեզ, ու դուք կառչած ըլլալով մեր ազգին, պիտի անդուլ շարունակէք Ձեր գործով ու գիրով շարունակել ազգօգուտ Ձեր նուիրումը, շարունակելով հանդէս գալ «Նայիրի»ի էջերէն, որովհետեւ դուք Ձեր բոլոր բջիջներով կապուած էք հայութեան, ինչպէս Ռուբէն Սեւակն էր կապուած, ինչպէս Իրման էր կապուած, ինչպէս Արմինէս էր կապուած:

Այս խօսքերը չեմ գրեր միտքարանքի համար. զի մենք կորուստի չենք ենթարկուած:

Մենք յաւիտեան շահած ենք Իրման ու Արմինէն:

Ու այդ ոգիով ալ կրնա՛նք ու պիտի շարունակենք ապրիլ ու գործել, միշտ մեր կողքին ունենալով մեր հարապատները:

Նորանոր յաջողութիւններու մաղթանքներով ու Ձեզի հանդիպելու սիրով՝

Պէյրուս,

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

մերուն վրայ: Սակայն, ա՛յս հանգրուանին, հրատապ կոչ-լոգունգը պէտք է ըլլայ ահագանգ մը:

«ՄԵՐ ՀԱԼԷՊ»ը [իմա՝ սուրիահայութիւնը]:

Իսկ ասոր մէջ ոչ մէկ ֆաղափական արեւելում կայ, ոչ ալ կողմնակցութիւն, այնքան ատեն որ «մարդասիրական օժանդակութիւններ» կը հասնին հոն:

Մեր այս խորհրդածութիւնները որեւէ ձեւով «Հայաստան» հիմնադրամը ստուերելու չեն միտիր, բայց, անհրաժեշտ է, որ անոր տեղն ու դերը ՃԻՇԴ բնորոշուին, մանաւանդ անոնց կողմէ, որոնք սփիւռֆահայ իրականութեան մէջ կը յաւակնին ըլլալ առաջնորդներ կամ անոր... մէջ՝ ներկայացուցիչներ:

Իսկ այդ տեղն ու դերը ի՞նչ կրնան ըլլալ, սա մեր տժգոյն օր-պահու եւ հրամայականութեան լրջութիւնը նիշդ ու լաւ ըմբռնելէ ուրիշ... առաւել՝ աւանդութիւնը չծարայեցնելու... «աւանդական» գործելածելի մը, որ է՝ «աւանդականութիւն»ը «թելթօն» իրականացնելու: Որովհետեւ պահանջուածը «Մերն» է, ատիկա ըլլայ գիւղ թէ այլ տարբերակ, բայց հիմա՝ ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԻՒՆ:

Կ'ըսուի՝ «հասկցողին շատ բարեւ», բայց, չհասկնալու բան մը կա՞յ... ու մնա՞ց ասոր մէջ...: